ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» փետրվարի 2019 թվական N 16-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2018թվականի հունվարի 10-ի թիվ 04-Ա որոշումը , Մայակովսկի համայնքի բնակիչներ Էդվարդ Քոչարյանի և Աշոտ Սիմոնյանի դիմումները ֆինանսական օգնության մասին, հաշվի առնելով նրանց ընտանիքների սոցիալական վիճակը և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, ***որոշում եմ՝***

1. Մայակովսկի համայնքի 2018 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից տրամադրել դրամական օգնություն.
   Էդվարդ Քոչարյանին - 20 000 / քսան հազար/ դրամ,
   Աշոտ Սիմոնյանին -50 000 / հիսուն հազար/ դրամ ,
   Ընդամենը 70 000 / յոթանասուն հազար / դրամ :
2. Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.փետրվարի 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» փետրվարի 2019 թվական N 17-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 17-րդ հոդվածի ,***ո ր ո շ ո ւ մ ե մ'***

2019 թվականի փետրվարի 18-ին ժամը 11.00-ին գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 57-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.փետրվարի 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18 » փետրվարի 2019 թվական N 18-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌԻՄԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ)ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման 4-րդ կետի պահանջները, ինչպես նաև Ռիմա Պետրոսյանի կողմից ներկայացված հայտը՝

***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Ռիմա Պետրոսյանին գյուղ Մայակովսկի 4-րդ փողոց թիվ 3/1 հասցեում՝ համաձայն իր հայտում նշված ժամանակահատվածի՝ 2019 թվականի առաջին եռամսյակի համար տրամադրել առևտրի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.փետրվարի 18

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18 » փետրվարի 2019 թվական N 19-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԻՄՈՆ ՍՈՂՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ)ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման 4-րդ կետի պահանջները, ինչպես նաև Սիմոն Սողոյանի կողմից ներկայացված հայտը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Անհատ ձեռնարկատեր Սիմոն Սողոյանին գյուղ Մայակովսկի 7-րդ փողոց թիվ 2/2 հասցեում, համաձայն իր հայտում նշված ժամանակահատվածի՝ 2019 թվականի առաջին եռամսյակի համար տրամադրել առևտրի օբյեկտում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.փետրվարի 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18 » փետրվարի 2019 թվական N 20-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱՐԵԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Նարեկ Հովհաննիսյանին Մայակովսկի համայնքի 4-րդ փողոցի թիվ 3/2 հասցեում 2019 թվականի առաջին եռամսյակում զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

2.Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Նարեկ Հովհաննիսյանին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

3.Հանձնարարել Արուս Ազատյանին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

2019 թ. փետրվարի 18
գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Հ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» փետրվարի 2019 թվական N 21-Ա

## ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Մայակովսկի համայնքապետարան են դիմել համայնքի բնակիչներ, բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողներ՝ Մովսես Խորենացու անվան համալսարանի 1-ին կուրսի ուսանող Գայանե Խուդաշյանը, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 4-րդ կուրսի ուսանող Լյուսի Շահինյանը և նույն համալսարանի 3-րդ կուրսի ուսանող Մերի Մարտիրոսյանը, խնդրելով կատարել ուսման վարձի որոշակի դրամական փոխանցում :

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 –րդ հոդվածի 1-ին մասի 24- րդ կետի և համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 18-ի թիվ 08–Ա որոշման պահանջները .

***որոշում եմ՝***

1. Կատարել փոխանցում .

1) Գայանե Խուդաշյանի անունով 70 000 / յոթանասուն հազար / դրամ ուսման վարձ<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> , 220003333808000 հաշվի համարին ,

2)Լյուսի Շահինյանի անունով 50 000 / հիսուն հազար / դրամ ուսման վարձ<<Արարատ բանկ>> , 1510002308480100 հաշվի համարին ,

3)Մերի Մարտիրոսյանի անունով 50 000 / հիսուն հազար / դրամ ուսման վարձ<<Արարատ բանկ>> , 1570027790960100 հաշվի համարին :

2. Հանձնարարել հաշվապահ Աստղիկ Հարությունյանին կատարել փոխանցում :

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.փետրվարի 20